«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 6
30.01.2023թ.

1. ՀԱԱՀ 2022 թ.-ի գործունեության արդյունքների վերաբերյալ.

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխում-ների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին ստեղծել աշխատանքային խումբ՝ համալսարանի աշխատակիցների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով:

2. Համալսարանի շրջանավարտների/ուսանողների զբաղվածության վերլուծության և առկա խնդիրների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին.

- Աշխատանքային կիսամյակի ընթացքում բացահայտված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները ներառել համալսարանի բարեփոխումների պլանում:

- ՀՀ կառավարությանը ներկայացնել պետական կառույցներում աշխատանքային կիսամյակի կազմակերպման և ուսանողների վարձատրության վերաբերյալ առաջարկություններ:

2.3. Կարիերայի զարգացման, շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանին հանձնարարել ոչ մասնագիտությամբ աշխատող ՀԱԱՀ ուսանողներին և շրջանավարտներին ներգրավել համալսարանի կողմից կազմակերպվող կարճաժամկետ ծրագրերում, դասընթացներում:

2.4. Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ս. Ավետիսյանին հանձնարարել՝ շարունակաբար հանրայնացնել ՀԱԱՀ կողմից կազմակերպված աշխատանքային կիսամյակի ընթացքում ուսանողների հաջողության պատմությունները:

3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման եվ վճարման» կարգում առաջարկվող փոփոխությունների ու լրացումների հաստատման վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման եվ վճարման» կարգում առաջարկվող փոփոխությունները և լրացումները:

1. Գործող կարգով, սահմանված լրավճարներից օգտվում է միայն «պրոֆեսորադասախոսական անձնակազմը», իսկ առաջարկվող փոփոխություններով, որոշ գիտական արդյունքների համար ներառվում է նաև «գիտական անձնակազմը»:

2. Կարգով սահմանված լրավճարների տրամադրման «Վարկանիշային միավորներ ապահովող հետազոտական աշխատանքի անվանացանկից» հանվել են համեմատաբար ցածր գիտական արժեք ունեցող հրապարակումները՝ թեզիսներ, պոստերներ, գիտատեղեկատվական ոչ հայտնի շտեմարաններում ընդգրկված պարբերականների հոդվածներ և այլն:

3. Լրավճարի ենթակա հետազոտական աշխատանքների անվանացանկում և լրավճարներում կատարվել են հետևյալ փոփոխությունները: ՀՀ ԲՈԿ-ի, ՌԴ ԲՈՀ-ի սահմանված ցուցակներում, Հումանիտար գիտությունների եվրոպական հղման ցուցիչի կամ Ռուսաստանի գիտական հղման ցուցիչի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրված հոդվածների համար գործող կարգով սահմանված 35000-ի փոխարեն առաջարկվում է 40000 դրամ:

4. Հիմնական փոփոխությունը վերաբերվում է Սկոպուս (Scopus) և Վեբ օֆ Սայնս (Web of Science) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրված հոդվածներին: Լրավճարի չափը գործող կարգով սահմանված է 65000 դրամ, առաջարկվում հրապարակումները տարբերակել ըստ քառորդների. Q 1 (Scopus և Web of Science) մակարդակին պատկանող ամսագրերում տպագրված հոդվածի համար սահմանել 200000 դրամ լրավճար, Q 2-ը 150000 դրամ, Q 3-ը 125000 և Q 4-ը 100000 դրամ:

5. Scopus և Web of Science միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրատարակչություններում տպագրված մենագրությունների համար առաջարկվում է սահմանել 200000 դրամ:

6. ՀՀ արտոնագրերի մեկ միավորի համար սահմանված 45000 դրամ լրավճարի դիմաց առաջարկվում է սահմանել 55000 դրամ:

7. Տեղական գիտահետազոտական դրամաշնորհի համար սահմանված 75000 դրամ լրավճարի դիմաց առաջարկվում է 100000 դրամ:

8. Լրավճարի ենթակա հետազոտական աշխատանքների անվանացանկի և լրավճարների չափերը սահմանող աղյուսակին արվել է նոր հղում հետևյալ բովանդակությամբ. «Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Web of Science) ընդգրկված պարբերականներում տպագրված հոդվածների քառորդների տարբերության դեպքում որոշումը կայացվում է ի օգուտ հեղինակի»:

9. «Սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսված լրավճարի վճարման սկզբունքները» 3-րդ բաժնում ավելացվել է նոր ենթակետ, որը վերաբերվում է Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված քառորդների ստուգման հարթակների հասցեների նշմանը: Նշված բաժնում ավելացվել է նոր դրույթ հետևյալ բովանդակությամբ. «ՀԱԱՀ գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների կողմից իրականացվող գիտական

թեմաների և ՀԱԱՀ-ի տարբեր հետազոտողների կողմից իրականացվող գիտական թեմաների շրջանակներում կատարված հրապարակումների համար լրավճար տրամադրվում է միայն աղյուսակի 2-րդ և 3-րդ կետերում նշված աշխատանքներին: Այսինքն, Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներին և մենագրություններին»:

10. 3.6. ենթակետում կատարվել է լրացում և ներկայացվել է հետևյալ խմբագրությամբ. «Եթե աշխատանքը կատարված է համահեղինակների կողմից, ապա սույն կարգով սահմանված լրավճարի գումարը բաժանվում է համահեղինակների միջև: Լրավճարի տրամադրման պահին եթե համահեղինակներից մեկը կամ համահեղինակները ազատված են աշխատանքից, ապա ամբողջ լրավճարը բաժանվում է մնացյալ համահեղինակների միջև կամ մեկ համահեղինակի մնալու դեպքում ամբողջ գումարը տրամադրվում է վերջինիս»:

11. Սահմանված աշխատանքների կատարման համար տվյալ օրացույցային տարում ՀԱԱՀ աշխատակցի համար հաշվարկվող լրավճարի առավելագույն չափը 800000 ՀՀ դրամ է (ներառյալ հարկերը), գործող կարգով սահմանված 750000 դրամի դիմաց:

4 Մոնիկա Վարդանի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց.

4.1. Ագրոնոմիական ֆակուլտետի Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Մոնիկա Վարդանի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Ձկնաբուծական տնտեսությունների գործունեության բնապահպանական և սոցիալ-տնտեսական ազդեցությունը Արարատյան հարթավայրի բնակավայրերի կայուն զարգացման վրա» անվանումով՝ Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությամբ:

4.2. Աշխատանքի գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մարկոսի Եղիազարյանին:

5. ՀԱԱՀ «Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների բացակայությունների անհատական լրացման» կանոնակարգի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց 2022-2023 ուստարվա երկրորդ կանչից սկսած «Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների բացակայությունների անհատական լրացման» կանոնակարգը ճանաչել ուժը կորցրած:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ